

ՀՀ վճարային հաշվեկշիռը 2021 թվականի հունվար-հունիսին[1]

2021թ. հունվար-հունիսին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 121.6 մլն ԱՄՆ դոլար (հետայսու՝ դոլար), որը 2020թ. հունվար-հունիսի համեմատ նվազել է 286.1 մլն դոլարով (տես՝ հավելվածների թիվ 1 աղյուսակը): Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը 2021թ. հունվար-հունիսին կազմել է -2.2%՝ նախորդ տարվա հունվար-հունիսի -7.8%-ի փոխարեն:

Գծապատկեր 1. ***2006-2021թթ. ընթացիկ հաշիվ/ՀՆԱ (%) հարաբերակցության դինամիկան եռամսյակային բաշխմամբ[2]***



Գծապատկեր 2. ***Ընթացիկ հաշվի բաղադրիչների կառուցվածքը 2011-2021թթ. հունվար-հունիս ամիսների կտրվածքով***



Ընթացիկ հաշվի պակասուրդի հիմնական մաս կազմող *ապրանքների բացասական հաշվեկշիռը* 2021թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 76.9 մլն դոլարով՝ 591.8 մլն դոլարից դառնալով 515.0 մլն դոլար:

[1] Նյութում օգտագործված են ՎՀՋ 6-ի սկզբունքներին համապատասխան կազմված վճարային հաշվեկշռի տվյալները:

[2] Շարքերի սեզոնային հարթեցումը կատարվել է Demetra+ ծրագրային փաթեթի X-12 ARIMA մեթոդի միջոցով:


Ապրանքների արտահանումը (կրեդիտ)[3] 2021 թվականի հունվար-հունիսին կազմել է 1433.6 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 18.0%-ով[4], իսկ ***ներմուծումը (դեբետ)***[3] աճել է 7.8%-ով՝ կազմելով 1948.6 մլն դոլար, արդյունքում ապրանքների գծով բացասական մնացորդը նվազել է 76.9 մլն դոլարով:

Ըստ ստացված տվյալների 2021թ. հունվար-հունիսին ***արտահանման*** կառուցվածքում[5] հիմնական ապրանքախմբերից աճ է արձանագրվել «Հանքահումքային մթերքներ» (աճել է 38.8%-ով կամ 147.9 մլն դոլարով՝ հիմնականում պղնձի խտանյութի գծով), «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (աճել է 36.8%-ով կամ 42.7 մլն դոլարով՝ հիմնականում երկաթամիահալվածքի, ալյումինե փայլաթիթեղների գծով), «Բուսական ծագման արտադրանք» (աճել է 58.8%-ով կամ 31.2 մլն դոլարով՝ հիմնականում ծիրանի, թարմ լոլիկի, կարտոֆիլի գծով), «Մանածագործական իրեր» (աճել է 50.4%-ով կամ 26.3 մլն դոլարով՝ հիմնականում տղամարդու կոստյումի, պիջակի և կանացի վերարկուի, անձրևանոցի գծով), «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» (աճել է 55.6%-ով կամ 15.1 մլն դոլարով՝ հիմնականում թարմ ձկան ու պանրի և կաթնաշոռի գծով), «Պատրաստի սննդի արտադրանքի» (աճել է 5.0%-ով կամ 12.2 մլն դոլարով՝ հիմնականում կոնյակի գծով):

Արտահանման կառուցվածքում հիմնական ապրանքախմբերից նվազում է արձանագրվել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» խմբով (նվազումը կազմել է 14.1% կամ 22.6 մլն դոլար՝ հիմնականում անմշակ ոսկու գծով), «Սարքեր և ապարատներ» (նվազումը կազմել է 53.2% կամ 14.5 մլն դոլար՝ հիմնականում ձեռքի/գրպանի ժամացույցի թափքի գծով):

Հարկ է նշել, որ 2020թ. հունվար-հունիսի համեմատությամբ արտահանումն աճել է 23.0%-ով կամ 256.8 մլն դոլարով, ընդ որում աճ արձանագրած ապրանքախմբերով արտահանումն աճել է 295.5 մլն դոլարով, իսկ նվազում արձանագրած ապրանքախմբերով նվազումը կազմել է 38.6 մլն դոլար (տես՝ հավելվածների թիվ 2 աղյուսակը):

Գծապատկեր 3. ***Հիմնական ապրանքախմբերի գծով արտահանման ծավալները 2014-2021թթ. հունվար-հունիս ամիսներին*** *(մլն ԱՄՆ դոլար)*




[3] Ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, ապրանքների արտահանման կրեդիտում և ներմուծման դեբետում ներկայացված են արտահանումը և ներմուծումը ՖՕԲ գներով՝ ավելացրած ապրանքներ ձեռք բերված տրանսպորտային կայաններում և ոչ մոնետար ոսկի հոդվածներով գրանցված արտահանում/ներմուծումը:

[4] Այստեղ և հետայսու ապրանքների ու ծառայությունների համար աճի և հավելաճի տեմպերը հաշվարկված են ընթացիկ գներով, իսկ ֆինանսական ակտիվների համար՝ անվանական արժեքով:

[5] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի (հետայսու ՀՀ ՎԿ) արտաքին առևտրի վիճակագրության տվյալների:

Ապրանքների արտահանման գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման ծավալում նշանակալի տեսակարար կշիռ ունեցող ապրանքների գծով (որոնք կազմել են արտահանման 77.2%-ը) 2021թ. հունվար-հունիսին արձանագրվել է աճ, որը հիմնականում պայմանավորված է, այդ ապրանքների մասով միավորի միջին գնի աճով: Այսպես, հավելվածների թիվ 6 աղյուսակում բերված հիմնական ապրանքների գծով արձանագրվել է 171.0 մլն դոլարի բացարձակ աճ, ընդ որում, եթե միավորի միջին գնի ավելացման հաշվին աճը կազմել է 213.3 մլն դոլար, ապա ֆիզիկական ծավալի նվազման հաշվին արտահանման ծավալների նվազումը կազմել է 42.2 մլն դոլար: Մասնավորապես, միավորի միջին գնի ավելացման հաշվին արտահանման ծավալների աճ է արձանագրվել պղնձի հանքաքար, խտանյութի (167.1 մլն դոլար), մոլիբդենի հանքաքար, խտանյութի (25.1 մլն դոլար), երկաթամիահալվածքի (20.4 մլն դոլար), սիգարետ և սիգարի (11.0 մլն դոլար), ալյումինե փայլաթիթեղի (9.4 մլն դոլար), տղամարդու կոստյում, պիջակի (8.0 մլն դոլար), կանացի վերարկու, անձրևանոցի (4.3 մլն դոլար), ցինկի հանքաքար, խտանյութի (3.4 մլն դոլար), իսկ ֆիզիկական ծավալի նվազման արդյունքում արտահանման ծավալների անկում է գրանցվել անմշակ ոսկու (59.6 մլն դոլար), պղինձի հանքաքար, խտանյութի (26.6 մլն դոլար), սիգարետ և սիգարի (20.6 մլն դոլար), երկաթամիահալվածքի (8.8 մլն դոլար) գծով: Նույն ժամանակահատվածում միավորի միջին գնի նվազման արդյունքում արտահանման ծավալների անկում է գրանցվել կոնյակի (20.7 մլն դոլար), ադամանդե քարի (11.6 մլն դոլար), անմշակ ոսկու (11.4 մլն դոլար), իսկ ֆիզիկական ծավալների աճի արդյունքում՝ հիմնականում ադամանդե քարի (41.3 մլն դոլար), կոնյակի (35.6 մլն դոլար), լոլիկի (3.6 մլն դոլար) գծով:

Գծապատկեր 4. ***2020թ. հունվար-հունիսին 2021թ. հունվար-հունիսի համեմատ հիմնական ապրանքների գծով արտահանման ծավալների բացարձակ աճն ըստ գործոնների*** *(մլն ԱՄՆ դոլար)*




	Պղնձի խտանյութ	Սիգարետ	Անմշակ ոսկի	Երկաթամի ահալվածք	Ադամանդ	Կոնյակ
Ընդամենը	140.5	-9.7	-70.9	11.6	29.7	14.9
Գնի հաշվին	167.1	11.0	-11.4	20.4	-11.6	-20.7
Քանակի հաշվին	-26.6	-20.6	-59.6	-8.8	41.3	35.6

Հարկ է նշել, որ 6 ամսվա արդյունքներով ուսումնասիրված ապրանքների գծով, որոնք ներկայացված են հավելվածների աղյուսակ 6-ում, արտահանման գների ընդհանուր մակարդակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 25.2%-ով, իսկ ՀՀ ՎԿ կողմից հրապարակված տվյալներով ամբողջ արտահանման մասով՝ 26.2%-ով:

Ներմուծման[5] ծավալը 2021թ. հունվար-հունիսին նախորդ տարվա համեմատ աճել է 8.3%-ով կամ 168.2 մլն դոլարով: Հարկ է նշել, որ 2021թ. հունվար-հունիսին ներմուծման ծավալների կառուցվածքում հիմնական ապրանքախմբերից աճ է արձանագրվել «Հանքահումքային մթերքներ» (աճել է 15.0%-ով կամ 53.4 մլն դոլարով՝ հիմնականում նավթ և նավթամթերքի գծով), «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» (աճել է 91.5%-ով կամ 52.0 մլն դոլարով՝ հիմնականում ադամանդե քարի և անմշակ ոսկու գծով), «Մանածագործական իրեր» (աճել է 19.5%-ով կամ 19.4 մլն դոլարով՝ հիմնականում գործվածքի, կանացի կոստյումի, շրջազգեստի գծով), «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (աճել է 5.2%-ով կամ 17.9 մլն դոլարով՝ հիմնականում էլեկտրական հոսանքափոխարկիչ, ինդուկցիոն կոճի գծով), «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր» (աճել է 42.4%-ով կամ 10.0 մլն դոլարով՝ հիմնականում արևաձաղկի ձեթի գծով):

Գծապատկեր 5. ***Հիմնական ապրանքախմբերի գծով ներմուծման ծավալները 2014-2021թթ. հունվար-հունիս ամիսներին*** *(մլն ԱՄՆ դոլար)*




Հարկ է նշել, որ 2021թ. հունվար-հունիսի արդյունքներով, հիմնական ապրանքախմբերից ներմուծման ծավալների նվազում է արձանագրվել «Պատրաստի սննդի արտադրանք» (նվազումը կազմել է 6.8% կամ 12.7 մլն դոլար՝ հիմնականում ծխախոտի հումք և մնացորդի հաշվին), «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» (նվազումը կազմել է 8.9% կամ 5.5 մլն դոլար՝ հիմնականում խտացրած կաթի, կարագի և այլ կաթնային յուղերի հաշվին), «Թուղթ և թղթից իրեր» (նվազումը կազմել է 10.6% կամ 4.8 մլն դոլար՝ ճենակավով կամ այլ անօրգանական նյութով պատված թղթի հաշվին):

Ներմուծման գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021թ. հունվար-հունիսին նշանակալի տեսակարար կշիռ ունեցող ապրանքների (որոնք կազմել են ներմուծման 31.3%-ը) գծով արձանագրվել է աճ, որը պայմանավորված է ինչպես միավորի միջին գնի, այնպես էլ ֆիզիկական ծավալի ավելացման հաշվին: Այսպես, հավելվածների թիվ 6 աղյուսակում բերված հիմնական ապրանքների գծով արձանագրվել է 40.0 մլն դոլարի բացարձակ աճ, ընդ որում, միավորի միջին գնի

ավելացման հաշվին աճը կազմել է 1.6 մլն դոլար, իսկ ֆիզիկական ծավալի աճի հաշվին՝ 38.4 մլն դոլար: Ընդհանրապես ֆիզիկական ծավալի ավելացման հաշվին աճ արձանագրվել է պարարտանյութերի (39.2 մլն դոլար), ադամանդե քարի (19.2 մլն դոլար), անմշակ ոսկու (16.0 մլն դոլար), սառնարան և սառցարանի (16.0 մլն դոլար), բնական գազի (12.9 մլն դոլար) գծով, իսկ միջին գնի ավելացման արդյունքում ներմուծման ծավալների աճ է արձանագրվել առանձին նյութերից բաղկացած դեղամիջոցի (31.7 մլն դոլար), արևածաղկի ձեթի (8.3 մլն դոլար), չմշակված ալյումինի (4.7 մլն դոլար) գծով: Միաժամանակ տեղի է ունեցել նաև որոշ ապրանքների նշանակալի նվազում ի հաշիվ ֆիզիկական ծավալների նվազման, մասնավորապես՝ առանձին նյութերից բաղկացած դեղամիջոցի (28.3 մլն դոլար), ծխախոտի հումքի (22.1 մլն դոլար), շաքար եղեգնի և քիմիապես մաքուր բուսաշաքարի (5.1 մլն դոլար), սիգարետի (3.4 մլն դոլար), իսկ միավորի միջին գնի նվազման շնորհիվ՝ պարարտանյութերի (42.8 մլն դոլար), սառնարան և սառցարանի (15.7 մլն դոլար), դիզվառելիքի (3.9 մլն դոլար), բենզինի (1.3 մլն դոլար) (տես՝ հավելվածների թիվ 6 աղյուսակը):

Գծապատկեր 6. ***2020թ. հունվար-հունիսին 2021թ. հունվար-հունիսի համեմատ հիմնական ապրանքների գծով ներմուծման ծավալների բացարձակ աճն ըստ գործոնների*** *(մլն ԱՄՆ դոլար)*



	Բնական գազ	Բենզին	Ադամանդ	Սիգարետ	Պարարտանյութ	Դեղամիջոց	Արևածաղկի ձեթ	Ալյումին չմշակված
ԸՆդամենը	12.9	1.4	21.5	-2.8	-3.6	3.4	8.1	12.4
Ի հաշիվ գնի	0.0	-1.3	2.2	0.6	-42.8	31.7	8.3	4.7
Ի հաշիվ քանակի	12.9	2.7	19.2	-3.4	39.2	-28.3	-0.3	7.7

Հարկ է նշել, որ 6 ամսվա արդյունքներով ուսումնասիրված ապրանքների գծով, որոնք ներկայացված են հավելվածների աղյուսակ 6-ում, ներմուծման գների ընդհանուր մակարդակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 0.3%-ով, իսկ ՀՀ ՎԿ կողմից հրապարակված տվյալներով ամբողջ ներմուծման մասով աճել է 10.5%-ով:

Ուսումնասիրելով ներմուծման կառուցվածքը, 2017-2021թթ. հունվար-հունիս ժամանակահատվածում, ըստ լայն տնտեսական դասակարգման (BEC), հարկ է նշել, որ ներմուծման կառուցվածքում առավել շատ աճի միտում են դրսևորվել «Կապիտալ ապրանքներ», «Տրանսպորտային սարքավորումներ» և «Վառելիք և վառելանյութ» ապրանքային բաժինների գծով՝ համապատասխանաբար 10.8%, 7.4% և 7.3%: Ընդ որում հարկ է նշել, որ եթե ուսումնասիրվող ժամանակահատվածում արտադրության կազմակերպման համար նախատեսվող ապրանքների (կապիտալ ապրանքների ու արտադրական պաշարների) գծով աճը կազմել է 8.2%, ապա սպառման

ապրանքների (մթերք և խմիչք ու սպառման ապրանքների) գծով աճը կազմել է 2.6%: Միաժամանակ, այդ ընթացքում, եթե սպառման ապրանքների ու մթերքի տեսակարար կշիռը նվազել է 4.3 տոկոսային կետով, ապա արտադրության կազմակերպման համար նախատեսվող ապրանքների տեսակարար կշիռն աճել է 3.3 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. *Ներմուծման կառուցվածքը 2017-2021թթ. հունվար-հունիս ամիսներին ըստ լայն տնտեսական դասակարգչի*

	2017	2018	2019	2020	2021	2017-2021թթ. միջին տարեկան հավելաճը, %
	մլն դոլար					
Մթերք և խմիչք	245.2	263.6	262.2	255.0	268.1	2.3%
Արտադրական պաշարներ	529.7	742.7	734.6	625.7	694.2	7.0%
Վառելիք և վառելանյութ	293.4	310.2	332.9	339.1	389.4	7.3%
Կապիտալ ապրանքներ	232.8	425.2	368.9	352.8	350.7	10.8%
Տրանսպորտային սարքավորումներ	99.8	196.8	250.7	121.8	132.7	7.4%
Սպառման ապրանքներ	325.0	372.4	375.0	336.5	364.1	2.9%
Ընդամենը	**1726.0**	**2311.0**	**2324.2**	**2030.9**	**2199.1**	**6.2%**
	տեսակարար կշիռը, %					
Մթերք և խմիչք	14.2	11.4	11.3	12.6	12.2	X
Արտադրական պաշարներ	30.7	32.1	31.6	30.8	31.6	X
Վառելիք և վառելանյութ	17.0	13.4	14.3	16.7	17.7	X
Կապիտալ ապրանքներ	13.5	18.4	15.9	17.4	15.9	X
Տրանսպորտային սարքավորումներ	5.8	8.5	10.8	6.0	6.0	X
Սպառման ապրանքներ	18.8	16.1	16.1	16.6	16.6	X
Ընդամենը	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**X**

2021թ. հունվար-հունիս ամիսներին ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանվող ապրանքների ծավալներն աճել են 34.1%-ով կամ 95.6 մլն դոլարով (հիմնականում Ռուսաստան՝ 92.5 մլն դոլարով): Դեպի Եվրամիության երկրներ արտահանման աճ է արձանագրվել հիմնականում դեպի Բուլղարիա՝ 23.8 մլն դոլարով, Գերմանիա՝ 14.7 մլն դոլարով, Նիդերլանդներ՝ 12.6 մլն դոլարով, իսկ «Մնացած երկրներ» խմբից զգալիորեն աճել է արտահանումը դեպի Չինաստան՝ 112.9 մլն դոլարով, ԱՄՆ՝ 15.6 մլն դոլարով: Միաժամանակ 67.5 մլն դոլարով կրճատվել է արտահանումը դեպի Շվեյցարիա, 25.8 մլն դոլարով դեպի ԱՄԷ, 14.5 մլն դոլարով դեպի Իրաք, 8.8 մլն դոլարով դեպի Իրան (տես՝ հավելվածների թիվ 4 աղյուսակը):

ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծումը (ըստ ապրանքների ծագման երկրի հատկանիշի) աճել է 7.8%-ով կամ 54.6 մլն դոլարով (հիմնականում Ռուսաստանից՝ 58.6 մլն դոլարով): Եվրամիության երկրներից ներմուծման ծավալներն աճել են 39.0 մլն դոլարով: ԵՄ երկրներից աճ է արձանագրվել հատկապես Իտալիայից՝ 11.6 մլն դոլարով, Բելգիայից՝ 9.1 մլն դոլարով, Գերմանիայից՝ 7.2 մլն դոլարով: «Մնացած երկրներ» խմբից ներմուծումն աճել է 74.7 մլն դոլարով: Ներմուծման ծավալների աճ է արձանագրվել հիմնականում Իրանից՝ 55.8 մլն դոլարով, Չինաստանից՝ 24.6 մլն դոլարով,

Վրաստանից՝ 17.9 մլն դոլարով: Ներմուծման ծավալների նվազում է արձանագրվել Թուրքիայից՝ 72.3 մլն դոլարով (71.7%-ով), Բրազիլիայից՝ 8.0 մլն դոլարով, Ուկրաինայից՝ 2.2 մլն դոլարով (տես՝ հավելվածների թիվ 5 աղյուսակը):


«Ծառայություններ» հոդվածի գծով 2021 թվականի հունվար-հունիս ամիսներին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 13.6%-ով, իսկ ներմուծումը՝ 20.3%-ով, արդյունքում *«Ծառայություններ»* հոդվածի գծով արձանագրվել է 83.9 մլն դոլարի դրական մնացորդ, նախորդ տարվա 54.5 մլն դոլարի փոխարեն: Հարկ է նշել, որ ծառայությունների բնագավառում ծավալների նման անկումը հիմնականում պայմանավորված է Կովիդ-19 համաճարակով, որի արդյունքում ծառայությունների ծավալների հիմնական նվազումը արձանագրվել է «Ճանապարհորդություն» հոդվածի գծով (արտահանման 63.7% նվազում, ներմուծման՝ 74.5%): Այս հոդվածի գծով արտահանումը 2021թ. 1-ին կիսամյակում կազմել է 84.7 մլն դոլար, որը 148.7 մլն դոլարով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի մակարդակից, իսկ ճանապարհորդական ծառայությունների ներմուծման ծավալը կազմել է 57.6 մլն դոլար, որը 168.1 մլն դոլարով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի մակարդակից, արդյունքում «Ճանապարհորդություն» հոդվածի գծով դրական մնացորդը կազմել է 27.1 մլն դոլար, որը 2020թ. 1-ին կիսամյակի համեմատ աճել է 19.4 մլն դոլարով:

Ծառայությունների հոդվածի գծով 2021թ. հունվար-հունիսին հիմնականում դրական մնացորդ են ապահովել «Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ» (154.3 մլն դոլար), «Շինարարություն» (32.9 մլն դոլար), «Ճանապարհորդություն» (27.1 մլն դոլար) և «Պետական ապրանքներ և ծառայություններ» (9.5 մլն դոլար) հոդվածների գծով (տես՝ հավելվածների թիվ 7 աղյուսակը):

Հարկ է նշել, որ 2021թ. հունվար-հունիսին «Ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության[6] հետ կապված ծառայությունների» (զբոսաշրջային ծառայությունների) արտահանման ծավալը կազմել է 91.0 մլն դոլար (2020թ. 1-ին կիսամյակում 232.1 մլն դոլար), իսկ ներմուծումը՝ 50.0 մլն դոլար (2020թ. 1-ին կիսամյակում 214.0 մլն դոլար), արդյունքում զբոսաշրջային ծառայությունների հաշվեկշիռը 2021թ. 1-ին կիսամյակի արդյունքներով դրական է 41.0 մլն դոլարով 2020թ. 1-ին կիսամյակի 18.1 մլն դոլարի դրական մնացորդի դիմաց: Հարկ է նշել, որ 10 տարվա կտրվածքով ներգնա զբոսաշրջային ծառայությունն ունեցել է դինամիկ աճ և 2011-2019թթ. երկու եռամյակների արդյունքներով միջին հավելաճը կազմել է 10.1%, սակայն համաճարակով պայմանավորված դրական աճի միտումը վերջին 10 տարվա կտրվածքով կազմել է -8.7% (անկում):

[6] «Զբոսաշրջային ծառայությունները», ի տարբերություն «Ճանապարհորդության», չի ներառում սեզոնային աշխատողների կողմից կատարված ճանապարհորդական ծախսերը (գիշերակաց, սնունդ, ներքին տրանսպորտ և այլ անձնական ծախսեր), սակայն ներառում է մարդատար տրանսպորտային ծառայությունները (առանց սեզոնային աշխատողների կողմից, միջազգային տրանսպորտի համար կատարված ծախսերի):

Գծապատկեր 7. ***Հբոսաշրջային ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալների դինամիկան 2010-2021թթ. հունվար-հունիս ամիսներին,*** *(մլն ԱՄՆ դոլար)*



2021 թվականի հունվար-հունիսի ընթացքում ***«Սկզբնական եկամուտներ»*** հոդվածի գծով արձանագրվել է 211.4 մլն դոլարի բացասական մնացորդ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 54.4 % կամ 74.5 մլն դոլարով: Հարկ է նշել, որ սկզբնական եկամուտների կառուցվածքում «ներդրումային եկամուտներ» հոդվածի բացասական մնացորդն աճել է 115.2 մլն դոլարով, իսկ «աշխատողների վարձատրություն» հոդվածի դրական հաշվեկշիռն աճել է 40.8 մլն դոլարով և կազմել 153.7 մլն դոլար: Հունվար-հունիսի արդյունքներով «Սկզբնական եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումների մեջ (445.3 մլն դոլար) զգալի է այլ ներդրումների գծով իրականացված տոկոսավճարները՝ 152.2 մլն դոլար: Դեպի դուրս փոխանցումների 46.0 մլն դոլարը կազմել են ոչ ռեզիդենտ «աշխատողների վարձատրությունը», իսկ մնացած 247.1 մլն դոլարը ուղղակի ու պորտֆելային ներդրումների գծով վճարումներն են շահաբաժինների, վերաներդրված եկամտի ու տոկոսավճարների տեսքով:

Անձնական դրամական փոխանցումները[7] դեպի Հայաստանի Հանրապետություն 2021թ. հունվար-հունիսին կազմել են 740.3 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 256. 5 մլն դոլարով: Սեզոնային աշխատողների կողմից ստացված զուտ աշխատավարձը[8] նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է է 23.1 մլն դոլարով՝ կազմելով 148.2 մլն դոլար, ինչ վերաբերում է ծառայություն մատուցող սեզոնային աշխատողների զուտ եկամուտներին[9], ապա նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դրանք աճել են 4.6

[7] Ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության դրամական փոխանցումներն իրենցից ներկայացնում են աշխատողների զուտ վարձատրությունը և տնային տնտեսությունների միջև դրամական և բնեղեն արտահայտությամբ տրանսֆերտները՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ:

[8] Զուտ աշխատավարձը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է առանց վճարված եկամտահարկի, միջազգային տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:

[9] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա:

մլն դոլարով՝ կազմելով 29.6 մլն դոլար: Տնային տնտեսությունների անձնական տրանսֆերտների ներհոսքը աճել է 221.0 մլն դոլարով՝ կազմելով 543.8 մլն դոլար 2020 թվականի նույն ժամանակահատվածի՝ 322.8 մլն դոլարի դիմաց: Ինչ վերաբերում է մասնավոր հատվածի կապիտալ տրանսֆերտներին, ապա այս ժամանակահատվածում կապիտալ տրանսֆերտների ներհոսքն աճել է 7.8 մլն դոլարով և կազմել 18.7 մլն դոլար:

Աղյուսակ 2. ***Դրամական փոխանցումների ներհոսքի բաշխվածքն ըստ վճարային հաշվեկշռի հոդվածների[10]***

մլն.ԱՄՆ դոլար

	2019 թ. հունվար-հունիս	**2020 թ. հունվար-հունիս**	**2021 թ. հունվար-հունիս**
Դրամական փոխանցումներ դեպի ՀՀ	597.5	483.8	740.3
Աշխատողների զուտ աշխատավարձ	229.1	125.1	148.2
Աշխատողների աշխատավարձ	295.0	161.1	190.8
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ	45.7	25.0	29.6
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված եկամուտներ	58.8	32.1	38.1
Անձնական տրանսֆերտներ	306.6	322.8	543.8
Կապիտալ տրանսֆերտներ	16.1	10.9	18.7

«Երկրորդային եկամուտներ» հոդվածի գծով զուտ փոխանցումներն աճել են 95.4 %-ով և կազմել են 520.9 մլն դոլար, ընդ որում ստացումները կազմել են 722.6 մլն դոլար, իսկ դեպի դուրս փոխանցումները՝ 201.8 մլն դոլար: Հարկ է նշել, որ 2021թ. հունվար-հունիսի արդյունքներով պետական հատվածի ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքը 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 56.7 մլն դոլարով և կազմել 83.0 մլն դոլար: Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքը այդ ընթացքում կազմել է 437.8 մլն դոլար 2020թ. նույն ժամանակաշրջանի 240.2 մլն դոլարի դիմաց:

Կապիտալի հաշվի զուտ ներհոսքը 2021թ. հունվար-հունիսին կազմել է 21.0 մլն դոլար, նախորդ տարվա 11.1 մլն դոլարի դիմաց, ընդ որում պետական կառավարման համակարգով ստացվել է զուտ 7.4 մլն դոլարի կապիտալ տրանսֆերտներ, իսկ մասնավոր հատվածով՝ զուտ 13.5 մլն դոլարի:


Ֆինանսական հաշվի զուտ փոխառություններն արտաքին աշխարհից 2021թ. հունվար-հունիսին կազմել են 243.5 մլն դոլար՝ նախորդ տարվա հունվար-հունիսի 490.3 մլն դոլարի դիմաց:

Ուղղակի ներդրումների գծով պարտավորությունների զուտ ստանձնումը 2021թ. հունվար-հունիսի ընթացքում կազմել են 85.3 մլն դոլար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 64.4 մլն դոլարի փոխարեն, ընդ որում զուտ ներհոսքի 23.6 մլն դոլարը իրականացվել է բաժնետիրական կապիտալում, 104.5 մլն դոլարը՝ վերաներդրված եկամտի գծով, իսկ պարտքային գործիքների գծով

[10] Կապված դրամական փոխանցումների շարքի վերանայման հետ՝ 2011 թվականից աշխատողների աշխատավարձի մի մասը արտացոլվում է ծառայություններ հոդվածում:

տեղի է ունեցել 42.8 մլն դոլարի մարումներ: Այդ ընթացքում ուղղակի ներդրումների զուտ ակտիվներն աճել են 25.0 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 110.3 մլն դոլարով:

Գծապատկեր 8. ***Ուղղակի ներդրումների գծով զուտ հոսքերը 2013-2021թթ. հունվար-հունիս ամիսներին, ըստ գործիքների,*** *(մլն ԱՄՆ դոլար)*



2021 թվականի հունվար-հունիսի ընթացքում պորտֆելային ներդրումների ակտիվների գծով տեղի է ունեցել ընդամենը 39.8 մլն դոլարի ձեռքբերումներ, նախորդ տարվա 14.4 մլն դոլարի մարումների փոխարեն, իսկ պարտավորությունների զուտ ստանձնումը կազմել է 721.7 մլն դոլար նախորդ տարվա հունվար-հունիսի 26.5 մլն դոլարի զուտ մարումների փոխարեն:

Այլ ներդրումների գծով 2021 թվականի հունվար-հունիսին տեղի է ունեցել 196.6 մլն դոլարի ֆինանսական ակտիվների զուտ ավելացում, իսկ զուտ ֆինանսական պարտավորություններն այդ ընթացքում ավելացել են 206.9 մլն դոլարով: Հարկ է նշել, որ եթե ակտիվների զուտ ավելացումը տեղի է ունեցել հիմնականում դրամական միջոցների ու ավանդների (247.4 մլն դոլար) գծով, ապա պարտավորությունների զուտ ավելացումը հիմնականում պայմանավորված է վարկերի (133.9 մլն դոլար), ինչպես նաև առևտրային վարկերի և կանխավճարների (119.1 մլն դոլար) աճով:

Հարկ է նշել, որ 2021 թվականի հունվար-հունիսին իրական և ֆինանսական հատվածներում օտարերկրյա ընդամենը ներդրումների զուտ հոսքերը կազմել են 348.5 մլն դոլար, որից՝ իրական հատվածում՝ 268.2 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 80.3 մլն դոլար: 2021թ. հունիսի վերջին այդ հատվածներով իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը (կուտակային պաշարները) կազմել է 10691.2 մլն դոլար, որից՝ իրական հատվածում 5787.4 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 4903.7 մլն դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել են 110.3 մլն դոլար, որից՝ իրական հատվածում 81.9 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 28.4 մլն դոլար: Արդյունքում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալը 2021թ. հունիսի վերջին կազմել է 5396.3 մլն դոլար, որից իրական հատվածում՝ 3947.5 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 1448.9 մլն դոլար: Հարկ է նշել, որ ընդամենը ներդրումների կուտակային պաշարների 45.2% և ուղղակի ներդրումների 26.7%-ը իրականացվել է

«Ֆինանսական միջնորդություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից» (գլխավորապես բանկային համակարգ), համապատասխանաբար՝ 16.5%-ը և 14.9%-ը՝ «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման», 4.4%-ը և 8.7%-ը՝ «Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն», 4.7%-ը և 7.6%-ը՝ «Մետաղական հանքաքարի արդյունահանում» ոլորտներում (տես՝ հավելվածների թիվ 10 աղյուսակը):

Ուսումնասիրելով ընդամենը ներդրումների զուտ ներհոսքի աշխարհագրական բաշխվածությունը 2021թ. հունվար-հունիս ամիսներին, հարկ է նշել, որ հիմնականում դրական ներհոսք է արձանագրվել Ռուսաստանի (101.3 մլն դոլար), Գերմանիայի (110.7 մլն դոլար), Լյուքսեմբուրգի (41.8 մլն դոլար) կողմից, իսկ զուտ նվազումներ՝ Կիպրոսի (66.3 մլն դոլար), Պանամայի (6.4 մլն դոլար), Նիդերլանդների (11.2 մլն դոլար) կողմից: Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա հարկ է նշել, որ հունվար-հունիսին զուտ դրական ներհոսքը կազմել է 110.3 մլն դոլար, որը հիմնականում իրականացվել է Գերմանիայից (72.9 մլն դոլար), Արգենտինայից (15.0 մլն դոլար), Լյուքսեմբուրգից (10.2 մլն դոլար), իսկ զուտ նվազում է եղել հիմնականում Ռուսաստանից (12.5 մլն դոլար), Ֆրանսիայից (9.8 մլն դոլար) և Նիդերլանդներից (8.9 մլն դոլար): Նշենք նաև, որ պաշարների մասով 2021թ. հունիսի վերջին իրական ու ֆինանսական հատվածներում իրականացված ընդամենը ներդրումների 18.4%-ը և ուղղակի ներդրումների 28.9%-ը իրականացվել է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ սուբյեկտների կողմից (1962.1 մլն դոլար ընդամենը ներդրումներ և 1560.1 մլն դոլար ուղղակի ներդրումներ), համապատասխանաբար 7.1%-ը և 3.3%-ը՝ Լյուքսեմբուրգի, 6.4%-ը և 3.7%-ը՝ Նիդերլանդների, 6.3%-ը և 10.5%-ը՝ Կիպրոսի, 5.8%-ը և 9.3%-ը՝ Միացյալ Թագավորության, 5.1%-ը և 4.7%-ը՝ Գերմանիայի ռեզիդենտ սուբյեկտների կողմից (տես՝ հավելվածների աղյուսակ 9):

2021 թվականի հունվար-հունիսին պահուստային ակտիվներն աճել են 529.3 մլն դոլարով, նախորդ տարվա հունվար-հունիսի 196.0 մլն դոլար նվազման համեմատ:

ՀՀ համախառն արտաքին պարտք

ՀՀ համախառն արտաքին պարտքը 2021թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 14044.7 մլն դոլար, որի 49.3%-ը կամ 6919.2 մլն դոլարը ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքն է (արտաքին պետական պարտք), 26.8%-ը կամ 3758.8 մլն դոլարը՝ ավանդային կազմակերպությունների (բացի ՀՀ կենտրոնական բանկից) պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը), իսկ 24.0%-ը կամ 3366.7 մլն դոլարը՝ այլ մասնավոր հատվածի պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը):

ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից ստացված արտաքին վարկերը 2021 թվականի երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ[1] կազմել են 5017.1 մլն դոլար, որից 4549.0 մլն դոլարը ՀՀ կառավարությանը տրված վարկերն են, իսկ 468.1 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկինը (տես աղյուսակ 13):


2021 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում արտաքին պետական վարկերի գծով ներհոսքը կազմել է 37.0 մլն դոլար, որի 79.9 %-ը՝ 29.6 մլն դոլարը, բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներն են: Երկկողմանի պայմանագրերով ստացված միջոցները կազմել են 7.4 մլն դոլար:

2021 թվականի երկրորդ եռամյակի ընթացքում արտաքին պետական վարկերի հիմնական գումարի գծով մարումները կազմել են 90. 5 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 24.6 մլն դոլար:


ՀՀ ավանդային կազմակերպությունների (բացի ՀՀ կենտրոնական բանկից) համախառն արտաքին պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը) 2021թ. հունիսի վերջին 2020 թվականի դեկտեմբերի վերջի համեմատ նվազել է 77.1 մլն դոլարով և կազմել 3758.8 մլն դոլար: 2021 թվականի հունիսի վերջին ավանդային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Նիդերլանդները՝ 26.8%, Լյուքսեմբուրգը՝ 22.1% և ԱՄՆ՝ 6.4%: Վարկերի մոտ 21%-ը ստացվել է միջազգային կազմակերպություններից:

ՀՀ այլ մասնավոր հատվածի համախառն արտաքին պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը) աճել է 603.3 մլն դոլարով և կազմել 3366.7 մլն դոլար: Պարտքի 47.1%-ը կամ 1587.8 մլն դոլարը կազմում են ներգրավված վարկերը, 43.7%-ը կամ 1469.6 մլն դոլարը՝ միջֆիրմային վարկերը, իսկ մնացած 309.3 մլն դոլարը՝ այլ պարտավորությունները՝ ներառյալ առևտրային վարկերը:

Գծապատկեր 10. ***ՀՀ համախառն արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների և վարկառուների 2021թ. հունիսի վերջի դրությամբ*** *(մլն ԱՄՆ դոլար)*



Գծապատկեր 11. ՀՀ համախառն արտաքին պարտքի կառուցվածքն ըստ հատվածների ժամանակաշրջանի վերջի դրությամբ *(մլն ԱՄՆ դոլար)*



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Աղյուսակ 1. ***ՀՀ վճարային հաշվեկշիռ*** [11]

մլն ԱՄՆ դոլար

	2018թ.	*2019թ.*	*2020թ*	*2020թ. հունվար-հունիս*	*2021թ. հունվար-հունիս*	*Հավելաճի փեմպը 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ,%*
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	-875.9	-1002.3	-478.7	-407.7	-121.6	-70.2
Կրեդիտ	6846.9	7679.7	5566.5	2460.0	2911.0	18.3
Դեբետ	7722.7	8681.9	6045.2	2867.7	3032.7	5.8
ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-1699.8	-1794.8	-1256.1	-537.3	-431.1	-19.8
Կրեդիտ	4941.7	5718.1	3762.6	-537.3	1954.5	-463.8
Դեբետ	6641.5	7512.9	5018.7	2354.9	2385.6	1.3
ԱՊՐԱՆՔՆԵՐ	-1724.4	-1727.9	-1356.2	-591.8	-515.0	-13.0
Կրեդիտ	2723.6	3287.5	2657.6	1214.9	1433.6	18.0
Դեբետ	4448.0	5015.4	4013.8	1806.8	1948.6	7.8
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	-1813.8	-1833.2	-1587.8	-699.3	-531.7	-24.0
Կրեդիտ	2546.7	3063.5	2401.8	1090.4	1379.9	26.6
Դեբետ	4360.4	4896.8	3989.6	1789.7	1911.6	6.8
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24.7	-66.9	100.1	54.5	83.9	53.8
Կրեդիտ	2218.2	2430.6	1105.0	602.7	520.9	-13.6
Դեբետ	2193.5	2497.5	1004.8	548.2	437.1	-20.3
Տրանսպորտ	-302.6	-373.5	-181.5	-81.4	-67.9	-16.6
Կրեդիտ	256.3	273.7	232.4	103.7	136.1	31.2
Դեբետ	558.9	647.2	413.9	185.1	203.9	10.2
Ճանապարհորդություն	47.3	39.3	-14.3	7.7	27.1	250.7
Կրեդիտ	1329.0	1528.0	292.8	233.5	84.7	-63.7
Դեբետ	1281.7	1488.7	307.1	225.7	57.6	-74.5
Շինարարություն	143.1	140.5	63.9	24.2	32.9	36.1
Կրեդիտ	191.1	178.1	77.7	33.2	40.1	20.7
Դեբետ	48.0	37.7	13.8	9.1	7.2	-20.4
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	216.2	220.6	295.0	142.9	154.3	8.0


[11] 2016 թվականին բնական գազի ներմուծման գինը վերանայվել է, ըստ որում հետադարձ վերանայվել են նաև 2015 թվականի գազի գները: Գնի նման փոփոխությունը, համաձայն միջազգային մեթոդաբանության, համարվում է «տրանսֆերային գնագոյացում» («Transfer pricing»): Համաձայն ԱՄՀ Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի կազմման Ձեռնարկի 6-րդ հրատարակության (BPM6) մեթոդաբանության երկու փոխկապակցված կազմակերպությունների միջև (տվյալ դեպքում ուղղակի ներդրող և դուստր կազմակերպություն) ապրանքների առքն ու վաճառքը անհրաժեշտ է գրանցել իրական (շուկայական) գներով, այսինքն ներմուծումն անհրաժեշտ է գրանցել չփոփոխված բարձր գնով, միևնույն ժամանակ անհրաժեշտ է գների միջև տարբերությունը դիտարկել որպես ուղղակի ներդրում դուստր կազմակերպությունում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ գործարքի արդյունքում մեծանում է ընկերության շահույթը, որը համապատասխան կարգով պետք է արտացոլվի վճարային հաշվեկշռի «վերաներդրված եկամուտ» հոդվածում (տես՝ Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի 6-րդ խմբագրությունը, 11.101-11.102 կետերը, https://www.imf.org/external/pubs/ft/bop/2007/pdf/bpm6.pdf):
Միջազգային մեթոդաբանությանը համապատասխան ՀՀ վճարային հաշվեկշռում վերագնահատվել են 2015թ. ներմուծման ծավալները՝ հասցնելով իրենց նախնական չփոփոխված մեծությանը, և նույն չափով ուղղակի ներդրումներ են գրանցվել ֆինանսական հաշվի բաժնետիրական կապիտալում «ուղղակի ներդրումներ» հոդվածում: Ճշգրտվել է նաև «վերաներդրված եկամուտ» հոդվածը և՛ ընթացիկ, և՛ ֆինանսական հաշիվներում: Նույնատիպ ճշգրտում իրականացվել է նաև 2013 թվականի վճարային հաշվեկշռում՝ հաշվի առնելով 2014 թվականի սկզբին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԳազՊրոմ Էքսպորտ» ՍՊԸ-ի միջև կնքնված պայմանագրի լրացուցիչ համաձայնագիրը: Հարկ է նշել, որ նշված վերանայումները չեն առնչվում ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության մեթոդաբանությանը:

	2018թ.	*2019թ.*	*2020թ*	*2020թ. հունվար-հունիս*	*2021թ. հունվար-հունիս*	*Հավելաճի տեմպը 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ,%*
Կրեդիտ	251.7	261.7	328.5	158.0	173.9	10.1
Դեբետ	35.5	41.1	33.5	15.1	19.6	30.2
Այլ	-79.3	-93.8	-62.9	-32.0	-69.6	117.4
Կրեդիտ	190.0	189.0	173.6	17.5	15.8	-9.3
Դեբետ	269.4	282.8	236.6	49.5	85.4	72.7
ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	112.4	101.3	10.7	18.1	41.0	125.8
Կրեդիտ	1340.6	1534.9	292.4	232.1	91.0	-60.8
Դեբետ	1228.2	1433.6	281.7	214.0	50.0	-76.6
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	200.4	179.0	-196.1	-136.9	-211.4	54.4
Կրեդիտ	910.1	939.1	460.1	210.2	233.9	11.2
Դեբետ	709.7	760.1	656.2	347.2	445.3	28.3
Աշխատողների վարձատրություն	656.8	675.4	286.4	113.0	153.7	36.1
Կրեդիտ	822.3	845.9	386.5	170.0	199.7	17.5
Դեբետ	165.5	170.4	100.1	57.0	46.0	-19.4
Ներդրումային եկամուտներ	-456.4	-496.4	-482.5	-249.9	-365.2	46.1
Կրեդիտ	87.8	93.2	73.7	40.2	34.2	-15.1
Դեբետ	544.2	589.6	556.2	290.2	399.3	37.6
Ուղղակի ներդրումներից	-169.3	-227.1	-224.5	-117.8	-203.9	73.0
Կրեդիտ	8.3	11.3	6.3	3.5	4.3	24.7
Դեբետ	177.5	238.5	230.9	121.3	208.2	71.7
Պորտֆելային ներդրումներից	-40.4	-19.4	-20.5	-10.6	-28.7	171.5
Կրեդիտ	24.1	27.6	26.6	14.6	9.8	-33.0
Դեբետ	64.5	47.0	47.1	25.2	38.5	53.1
Այլ ներդրումներից	-246.7	-249.9	-237.4	-121.5	-132.5	9.1
Կրեդիտ	55.4	54.3	40.7	22.2	20.1	-9.6
Դեբետ	302.1	304.2	278.1	143.7	152.6	6.2
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	623.6	613.6	973.5	266.5	520.9	95.4
Կրեդիտ	995.1	1022.5	1343.8	432.1	722.6	67.2
Դեբետ	371.5	408.9	370.3	165.6	201.8	21.8
Պետական կառավարում	144.2	145.2	219.7	26.4	83.0	215.1
Կրեդիտ	263.3	283.4	347.8	84.8	143.5	69.2
Դեբետ	119.1	138.2	128.1	58.4	60.4	3.4
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություն-ներ, տնային տնտեսություններ և ՏՏՄՈԱԿ	479.4	468.4	753.8	240.2	437.8	82.3
Կրեդիտ	731.8	739.1	996.1	347.4	579.2	66.7
Դեբետ	252.4	270.8	242.2	107.2	141.3	31.9
ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ	67.6	54.5	45.4	11.1	21.0	89.8
Կրեդիտ	77.4	65.5	51.3	14.4	27.0	87.6
Դեբետ	9.8	11.0	6.0	3.3	6.0	80.4
Պետական կառավարում	34.0	23.9	17.0	2.9	7.4	159.3
կրեդիտ	34.0	23.9	17.0	2.9	7.4	159.3
դեբետ	0.0	0.0	0.0	0.0	0.0	-

	2018թ.	*2019թ.*	*2020թ*	*2020թ. հունվար-հունիս*	*2021թ. հունվար-հունիս*	*Հավելաճի տեմպը 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ,%*
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություն-ներ, տնային տնտեսություններ և ՏՏՈՒԱԿ	33.5	30.6	28.4	8.2	13.5	65.4
կրեդիտ	43.3	41.6	34.4	11.5	19.5	69.7
դեբետ	9.8	11.0	6.0	3.3	6.0	80.4
Զուտ վարկավորում (+)/ զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից	-808.3	-947.8	-433.4	-396.7	-100.7	-74.6
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	-695.6	-445.8	-688.5	-490.3	-243.5	-50.3
Զուտ վարկավորում(+) զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	-695.6	-445.8	-688.5	-490.3	-243.5	-50.3
ՈՒղղակի ներդրումներ	-259.8	-233.9	-74.5	-64.4	-85.3	32.5
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	7.0	-133.0	-27.3	17.1	25.0	46.3
Զուտ պարտավորությունների ստանձնում	266.8	100.9	47.2	81.5	110.3	35.4
Պորտֆելային ներդրումներ	33.0	-8.2	49.4	12.1	-681.9	-5751.4
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	14.1	94.8	43.3	-14.4	39.8	-375.8
Զուտ պարտավորությունների ստանձնում	-18.9	103.0	-6.1	-26.5	721.7	-2822.1
Ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	0.6	-1.4	-0.2	0.0	4.7	9509.3
Այլ ներդրումներ	-432.9	-794.0	-385.6	-242.0	-10.3	-95.8
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	139.2	346.6	-9.9	-57.2	196.6	-443.9
Զուտ պարտավորությունների ստանձնում	572.1	1140.6	375.7	184.9	206.9	11.9
Այլ կապիտալ	2.0	1.7	1.6	1.5	0.0	-102.1
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	2.0	1.7	1.6	1.5	0.0	-102.1
Զուտ պարտավորությունների ստանձնում	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
Դրամական միջոցներ և ավանդներ	-305.7	-518.4	463.1	335.5	283.6	-15.5
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	67.0	188.9	181.8	33.4	247.4	640.6
Զուտ պարտավորությունների ստանձնում	372.8	707.3	-281.3	-302.1	-36.1	-88.0
Վարկեր	-70.0	-401.6	-705.7	-515.5	-176.9	-65.7
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	79.9	52.1	-126.2	-79.5	-43.0	-45.9
Զուտ պարտավորությունների ստանձնում	149.8	453.8	579.5	436.0	133.9	-69.3
Ապահովագրական, կենսաթոշակային և սպառնդարտացված ծրագրեր	0.0	4.3	-4.9	-3.7	1.4	-137.7
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	1.2	6.6	-2.3	-2.6	3.1	-218.0
Զուտ պարտավորությունների ստանձնում	1.1	2.3	2.6	1.1	1.7	55.3

	2018թ.	2019թ.	2020թ	2020թ. հունվար-հունիս	2021թ. հունվար-հունիս	Հավելաճի տեմպը 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ,%
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-15.4	106.2	-103.7	-45.5	-127.8	180.9
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-2.2	90.5	-60.4	-2.3	-8.7	269.8
Զուտ պարտավորությունների ստանձնում	13.2	-15.6	43.3	43.1	119.1	176.1
Այլ հաշիվներ սպացվող/վճարվող	-43.8	13.8	-36.1	-14.5	9.4	-164.9
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-8.7	6.7	-4.4	-7.6	-2.3	-70.5
Զուտ պարտավորությունների ստանձնում	35.1	-7.1	31.8	6.9	-11.7	-269.8
ՀՓԻ (պարտավորությունների զուտ սպանձնում)	0.1	-0.1	-0.1	-0.1	0.0	-91.9
Պահուստային ակտիվներ	-36.4	591.9	-277.6	-196.0	529.3	-370.0
Զուտ սխալներ և բացթողումներ	112.7	502.0	-255.2	-93.7	-142.8	52.4

Գծապատկեր 1. ***Արտահանման, ներմուծման և ապրանքային հաշվեկշռի դինամիկան (ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության),*** *մլն. ԱՄՆ դոլար*



Աղյուսակ 2. *ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը*[12] *(ըստ ԱՏԳԱԱ ապրանքախմբերի)*

մլն. ԱՄՆ դոլար

	2018թ.	2019թ.	2020թ.	2020թ. հունվար-հունիս	2021թ. հունվար-հունիս	Հավելաճի տեմպը 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	50.6	51.3	78.3	27.1	42.2	55.6
